ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-21/27

ք. Երևան « 06 » օգոստոսի 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Գալստյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ասատուր Երիցյանի, որը գործում է ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 95 000 (իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, սկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջներ: Ընդ որում, Կատարողը հայտնաձայնագիրը կնքում, իսկ

տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02506264

Ս.Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ
ք. Երևան, Մանուշյան փ. 98 տ.
ՀՎՀՀ 00196752
Հ/Հ 11813010994500
«Այդի Բանկ»

Ա. Երիցյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« 06 » օգոստոսի 2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԽԾՁԲ-21/27 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	**71351540/503**	**ՀՀ ք. Երևան, Շենգավիթ Գ. Նժդեհի փ. 23/1 վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ**	**դրամ**	**95 000**	**1**	**ՀՀ ք. Երևան, Շենգավիթ Գ. Նժդեհի փ. 23/1**	**Շինարարական աշխատանքների կատարման ավարտ**

Որակի տեխնիկական հսկողության ծառայությունների տեխնիկական առաջադրանք

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման **/նախագծանախահաշվային փաստաթղթերը կցվում են/** վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ
պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:
2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-
ի N44 հրամանով հաստատվածշինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:
3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝

- շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,
- ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին,
- Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելովհամապատասխան հիմնավորումը,
- ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,
- ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուսփաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,
- վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,

- ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար:
Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլործավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժ
եշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,
• կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում),
այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնքկատարվում են կապալի պայմանագրի իրակ
անացման շրջանակում,
• շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որո
նք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցըպահպանելու համար,
• հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ
և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ հա
մապատասխան միջոցառումների իրականացման համար,
• կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկ
ման համար (ընդգրկելով կատարված աշխատանքներիհավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթե
ր),
• կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի
կազմմանը և հաստատմանը,
• շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել
Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագր
երը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները,
• Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները:
• պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության
որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-
ով նախատեսված ծածկման շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում:

Հաշվետվության ներկայացման պահանջներ

Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ ընթացիկ և ա
վարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում ենծառայությունների հանձնման-
ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:
Ընթացիկ հաշվետվությունները ներկայացվում են պարբերաբար, ընդգրկելով իրականացված ծառայությո
ւնները և կատարված աշխատանքները հավաստող ուհիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճ
ենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարականաշխա
տանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, լաբորատոր փորձարկումների արդյունք
ներ, նյութերի, կոնստրուկցիաների որակիհամապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյա
լ) աշխատանքների ընդունման ակտեր, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ծածկված(միջան
կյալ) աշխատանքների լուսանկարներ:
Ավարտական հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական
կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրականտեղեկանք իրականացված շինարարական աշ
խատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ա
վարտվածշինարարական օբյեկտի լուսանկարներ:
Ընթացիկ հաշվետվությունները նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կ
ատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողիկողմից ստորագրելուց հետո հինգ աշխատ
անքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-
ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական
կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ
աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ք. Երևան, Շենգավիթ Գ. Նժդեհի փ. 23/1 վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ

1. Ներքին ջրամատակարարում և կենցաղային կոյուղի

N	Անվանումը	Չափման միավորը	Ընդհ. Քանակը	Նյութի միավոր արժեքը հազար ՀՀ դրամ	Նյութերի ընդհանուր արժեքը հազար ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
	ՍԱՌԸ ԵՎ ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ				
1	de20 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով (ներառյալ ձևավոր մասերը)	գծմ	110.0		
2	DN15 գնդային փականի մոնտաժում (ներառյալ կցորդիչները՝ամերիկանկա)	հատ	48		
3	de20 խողովակների պատերին ամրացման ամրակների մոնտաժում	հատ	55		
	ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳ				
1	Q=18մ3/ժ, H=6մ պարամետրերով կոյուղու պոմպի մոնտաժում նկուղային հարկում (канализационная станция)	կոմպ.	1		
2	Φ110 պոլիէթիլենե խողովակների մոնտաժում ներառյալ հողային աշխատանքները,փորձարկումով	գծմ	4.0		
3	Φ110 պոլիէթիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	գծմ	7.0		
4	Φ110 կոյուղու PVC խողովակների մոնտաժում ներառյալ հողային աշխատանքները,փորձարկումով	գծմ	5.0		
5	Φ110 կոյուղու PVC խողովակների մոնտաժում,փորձարկումով	գծմ	65.0		
6	Φ50 կոյուղու PVC խողովակների մոնտաժում,փորձարկումով	գծմ	21.0		
7	Φ110, PVC ձևավոր մասերի մոնտաժում	հատ	35		
8	Φ110x50, PVC անցումային ձևավոր մասերի մոնտաժում	հատ	12		
9	Φ50, PVC ձևավոր մասերի մոնտաժում	հատ	15		
10	Φ110, պոլիէթիլենե խողովակների ձևավոր մասերի մոնտաժում	հատ	3		
11	Φ110 ստուգիչ-մաքրիչների մոնտաժում	հատ	12		
12	Խողովակի ամրացումը պատին կեռներով (клипсы)՝ (Տակառիկ (шпилька) M10/100, Ամրացման սալ, Խամութ, 2 հատ խարիսխ գամասեղ)	կոմպ.	30		
	ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ				
1	Լվացարակոնքի մոնտաժում (ներառյալ տաք և սառը ջրի ծարակ, սիֆոն, միացման ճկուն խողովակներ)	կոմպ.	17		
2	Զուգարանակոնք, լվացման բաքով մոնտաժում (ներառյալ ջրահեռացման (GF) խողովակ, ջրի միացման ճկուն խողոբվակ)	կոմպ.	18		
3	Писсуар մոնտաժում (ներառյալ միացման դետալները)	կոմպ.	4		
	Ընդամենը՝				

8.31%

** Ծանոթություն*
1. Ջրամատակարարման համակարգում օգտագործվող խողովակները նախատեսված են 10մթն. (1.0մպա) աշխատամքային ճնշմամբ

2. Ներքին լուսավորություն

N	Անվանումը	Չափման միավորը	Ընդհ. Քանակը	Նյութի միավոր արժեքը ՀՀ դրամ	Նյութերի ընդհանուր արժեքը հազար ՀՀ դրամ
1	Վարդակ	հատ	430		
2	Անջատիչ	հատ	135		
3	2X4	հատ	1410		
4	2x2,5	հատ	1350		
5	2x1,5	հատ	1000		
6	Բաժանարար տուփ	հատ	110		
7	Տեղադրման տուփ	հատ	560		
8	Ապահովիչների տուփ	հատ	9 (12տեղ)		
9	Միաֆազ անջատիչ	հատ	84 (50Ա)		
10	Լեդ լույս (300x300)	հատ	360		
	Ընդամենը՝				

5.47%

** Ծանոթություն*
2. աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվող ապրանքատեսակների և/կամ նյութերի տեխնիկական պարամետրերը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

3. ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	318.6			
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	21			
3	հատակ սեղմագրանիտ	քմ	223.2			
4	հատակ լամինատ	քմ	110.4			
5	ընդ.պատերի հարդարում	քմ	1495.01			
6	պատերի կաֆել հ1.6մ	մ	43.3			
7	շրիշակ հատակի նյութից	գմ	384.68			
8	ապակե վիտրաժ հ2.1	քմ	3.6			
9	դռներ 1.2մ,հ2.1	հատ	2			
10	դռներ 0.9մ,հ2.1	հատ	11			
11	դռներ 0.8մ,հ2.1	հատ	6			
12	պատուհանագոգ՝ ներքին	գմ	18.15			
13	100մմ նոր պատեր	քմ	4.5			
14	200մմ նոր պատեր	քմ	7.5			
15	ճաղապատ հ2.4	քմ	9.8			
16	մետաղական դռներ հ2.4	քմ	22.8			
17	հատակի Ց/Ա քանդում	քմ	333.6			
18	պատերի քանդում	քմ	6.2			
19	պատերի մաքրում	քմ	1473.81			

4. Առաջին հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	186.6			
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	7.6			
3	հատակ սեղմագրանիտ	քմ	58.9			
4	հատակ լամինատ	քմ	127.9			
5	ընդ.պատերի հարդարում	քմ	605			
6	պատերի կաֆել հ1.6մ	մ	24			
7	շրիշակ հատակի նյութից	զմ	201.4			
8	ապակե վիտրաժ հ2.4	քմ	4.32			
9	դռներ 1.5մ,հ2.4	հատ	3			
10	դռներ 0.9մ,հ2.1	հատ	9			
11	դռներ 0.8մ,հ2.1	հատ	2			
12	դռներ 1.8մ,հ2.4	հատ	1			
13	պատուհանագոգ՝ ներքին	զմ	20.1			
14	100մմ նոր պատեր	քմ	18			
15	պատշգամբի դուռ հ2.7	հատ	1			
16	մետաղապլաստե ապակեպատում	քմ	8.38			
17	դռների քանդում	հատ	17			
18	շրիշակի քանդում	զմ	270			
19	հատակի Ց/Ա քանդում	քմ	270			
20	պատերի քանդում	քմ	36			
21	պատերի մաքրում	քմ	650			

5. Երկրորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	185.6			
2	հատակ սեղմագրանիտ	քմ	149.9			
3	հատակ լամինատ քմ	քմ	35.7			
4	ընդ.պատերի հարդարում	քմ	408.95			
5	շրիշակ հատակի նյութից	զմ	132.5			
6	ապակե վիտրաժ հ2.4	քմ	9.12			
7	դռներ 1.5մ,հ2.4	հատ	1			
8	դռներ 0.9մ,հ2.1	հատ	6			
9	դռներ 0.8մ,հ2.1	հատ	3			
10	պատուհանագոգ՝ ներքին	զմ	13.3			
11	100մմ նոր պատեր	քմ	5.5			
12	պատշգամբի դուռ հ2.7	հատ	7			
13	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	3.51			
14	դռների քանդում	հատ	19			
15	շրիշակի քանդում	զմ	200			
16	հատակի Ց/Ա քանդում	քմ	270			
17	պատերի քանդում	քմ	32			
18	պատերի մաքրում	քմ	450			

6. Երրորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը

1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	131.4			
2	հատակ սեղմագրանիտ	քմ	88.4			
3	հատակ լամինատ	քմ	43			
4	ընդ.պատերի հարդարում	քմ	377.5			
5	շրիշակ հատակի նյութից	զմ	119.8			
6	ապակե վիտրաժ հ2.4	քմ	4.32			
7	դռներ 1.5մ,հ2.4 հատ	հատ	1			
8	դռներ 0.9մ,հ2.1 հատ	հատ	8			
9	դռներ 0.8մ,հ2.1 հատ	հատ	3.68			
10	պատուհանագոգ՝ ներքին	զմ	15.5			
11	100մմ նոր պատեր	քմ	35			
12	պատշգամբի դուռ հ2.7	հատ	7			
13	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	7.02			
14	դռների քանդում	հատ	20			
15	շրիշակի քանդում	զմ	220			
16	հատակի Ց/Ա քանդում	քմ	270			
17	պատերի քանդում	քմ	7.7			
18	պատերի մաքրում	քմ	450			

7. Չորրորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	179.6			
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	26.5			
3	հատակ սեղմագրանիտ	քմ	26.5			
4	հատակ լամինատ	քմ	153.1			
5	ընդ.պատերի հարդարում	զմ	601.3			
6	պատերի կաֆել հ1.6մ	քմ	35.5			
7	շրիշակ հատակի նյութից	զմ	199			
8	ապակե վիտրաժ հ2.4	քմ	4.32			
9	դռներ 1.5մ,հ2.4	հատ	1			
10	դռներ 0.9մ,հ2.1	հատ	10			
11	դռներ 0.8մ,հ2.1	հատ	5			
12	պատուհանագոգ՝ ներքին	զմ	16.5			
13	200մմ նոր պատեր	քմ	65			
14	պատշգամբի դուռ հ2.7	հատ	7			
15	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	3.51			
16	դռների քանդում	քմ	15			
17	շրիշակի քանդում	քմ	260			
18	հատակի Ց/Ա քանդում	քմ	260			
19	պատերի քանդում	քմ	7.7			
20	պատերի մաքրում	քմ	660			

8. Հինգերորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	261.5			
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	31			
3	հատակ սեղմագրանիտ	քմ	111.6			

4	հատակ լամինատ	քմ	173.3			
5	ընդ.պատերի հարդարում	քմ	817.1			
6	պատերի կաֆել h1.6մ	քմ	54.3			
7	շրիշակ հատակի նյութից	զմ	269.2			
8	ապակե վիտրաժ h2.4	քմ	4.32			
9	դռներ 1.5մ,h2.4	հատ	1			
10	դռներ 0.9մ,h2.1	հատ	11			
11	դռներ 0.8մ,h2.1	հատ	6			
12	պատուհանագոգ՝ ներքին	զմ	17.3			
13	200մմ նոր պատեր	քմ	65			
14	պատշգամբի դուռ h2.7	հատ	6			
15	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	3.51			
16	դռների քանդում հատ	քմ	15			
17	շրիշակի քանդում	քմ	260			
18	հատակի Ց/Ա քանդում	քմ	260			
19	պատերի քանդում	քմ	7.7			
20	պատերի մաքրում	քմ	660			

9. Վեցերորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը	
1	առաստաղ՝ սվաղ, գաջ քմ	քմ	78.7				
2	հատակ սեղմագրանիտ քմ	քմ	23.4				
3	հատակ լամինատ քմ	քմ	55.3				
4	ընդ.պատերի հարդարում	քմ	178.3				
5	շրիշակ հատակի նյութից գծ	զմ	47				
6	դռներ 1.0մ,h2.1	հատ	1				
7	դռներ 0.9մ,h2.1	հատ	2				
8	պատուհանագոգ՝ ներքին	զմ	22.4				
	Ընդամենը՝ 1-9				**42 041 666.67**		100%
	ԱԱՀ 20%				**8 408 333.33**		
	Ամբողջը՝ ներառյալ Շահույթը				**50 450 000**		

Կնքված պայմանագրով ընթացիկ նորոգման աշխատանքների ընդհանուր գումարը կազմում է 50 450 000 (հիսուն միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02506264

Ս.Գալստյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ
ք. Երևան, Մանուշյան փ. 98 տ.
ՀՎՀՀ 00196752
Հ/Հ 11813010994500
«Այդի Բանկ»

Ա. Երիցյան
/ստորագրություն/
Կ.Տ